

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՊՈՂՈՍՅԱՆ ՈՒՌՁԱՆՆԱ ՎՈՒՂՅԱՅԻ

**ԽԻԿԱՐԻ ԶՐՈՒՅՑԸ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ՝
ՀԻՆԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

**Ժ.01.01 - «Հայ դասական գրականություն» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության**

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Ե Ր Ե Վ Ա Ն - 2014

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների դոկտոր

ԱՐՇԱԿ ԳԵՎՈՐԳԻ ՄԱԿՈՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՎԱԶԳԵՆ ՀՄԱՅԱԿԻ ՍԱՖԱՐՅԱՆ

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՀԱՅԿ ԱՇՈՏԻ ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ **Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան**

Պաշտպանությունը կայանալու է 2014թ. հոկտեմբերի 29-ին՝ ժամը 14³⁰-ին, ԵՊՀ-ում գործող՝ ԲՈՀ-ի գրականագիտություն 012 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ ք. Երևան 25, Աբովյան 52 ^ա, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, թիվ 202 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ. սեպտեմբերի 26-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝
բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

ԱԼ. Ա. ՄԱԿԱՐՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

«Պատմութիւն և խրատք Խիկարայ իմաստնոյ» բնագիրն առ այսօր գբաղեցնում է բանասերներին, քանի որ նրա ծագման, նախնական տարբերակի, հայրենիքի, լեզվի առանձնահատկությունների և այլ հարցերի վերաբերյալ դեռևս կան բազում հակասություններ: Խիկարի պատմությունը հայտնի է էլեֆանտինյան պապիրուսներից, Յին Կտակարանի Տովբիթ գրքից, Եզովպոսի կենսագրության երկրորդ մասից, պահպանվել է հին արամեերեն, սյուրիերեն (ասորերեն), հայերեն, հունարեն, արաբերեն, եթովպերեն, ռումիներեն, սլավոներեն և այլ խմբագրություններով: Յին Կտակարանի իմաստության գրքերի հետ սերտ աղերսներ ունեցող այս գրույցը խոր հետք է թողել արևելյան ժողովուրդների գրականության վրա, որով և բացատրվում է նրա հանդեպ դրսևորված մեծ հետաքրքրությունը:

Մինչ էլեֆանտինյան պապիրուսների հայտնաբերումը (1893-1908) գիտնականներ Գ. Յոֆմանը, Ա. Մյուլլերը, Կ. Կրունբախերը, Մ. Լիցբարսկին և ուրիշներ գրույցին վերագրել են հրեական ծագում՝ վկայակոչելով Յին Կտակարանի Տովբիթ գրքում Աքիաքարոսի մասին հիշատակությունը: Էլեֆանտինյան պապիրուսների հայտնաբերումով նոր փուլ է սկսվում բանասիրության մեջ, գրվում են մի շարք աշխատություններ, գերմանական բանասիրության մեջ (Մ. Լիցբարսկի, Թ. Նյուլդեքե, Ռ. Սմենդ, Է. Մեյեր) հնչում են գրույցի հրեական ծագումը հերքող կարծիքներ՝ հիմնված պապիրուսներում հրեադավանության ոչ հանդիչ փաստերի վրա: Չնայած դրան՝ 1898-ին հրատարակվում է անգլիացի երեք գիտնականների՝ Ռ. Յարիսի, Ֆ. Կոնիբերի և Ա. Սմիթ Լևիսի հայտնի գիրքը¹, որի առաջաբանում բազմաթիվ զուգահեռներ անցկացնելով գրույցի և Յին ու Նոր Կտակարանների միջև, հեղինակները ենթադրում են, որ գրույցն ունի հրեական ծագում, սկզբնապես գրվել է արամեերեն և եղել է Յիսուսի գրադարանի գրքերից: Դրանից հետո բանասիրության մեջ մեծ ուշադրության է արժանացել Ֆրանսուա Նոի աշխատությունը², որտեղ նա պնդում է, որ արամեերեն պապիրուսները թարգմանություն են հին ասորերենից կամ հին պարսկերենից և դրանցում խիստ զգալի է հրեա խմբագրի միջամտությունը:

Խիկարի հայերեն բնագրին նոր տեսանկյունից նայելու անհրաժեշտությունը թելադրված է հրեական բանասիրության մեջ գրույցի ծագման, թարգմանության և մի շարք այլ հարցերի վերաբերյալ հակասական կարծիքների առկայությամբ, որոնք, ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, աղերսվում են նաև հայագիտությանը:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Յին արևելյան գրավոր աղբյուրների ուսումնասիրության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում բանասիրական - գրականագիտական վերլուծությունը, որն արդի գիտության պահանջներից է: Յայ բանասիրության մեջ Խիկարի գրույցն այդ առումով համակողմանի լիարժեք ուսումնասիրության չի արժանացել: Սույն ատենախոսությամբ փորձ է արվում լրացնել այդ բացը՝ ա-

¹ The story of Ahikar by F.C. Conybeare, J.R. Harris and A. S. Lewis, London, 1898.

² F. Nau, Ahikar et les papyrus d'Élephantine. Revue Biblique Internationale, 1912.

ռաջին անգամ անդրադառնալով միջազգային բանասիրության մեջ վերջին շրջանում կատարված որոշ վերլուծությունների:

Հայ բանասիրության մեջ կարևորել ենք այն, որ Խիկարի ինքնության հարցին առաջին անգամ 1874թ. անդրադարձել է Գաբրիել արք. Այվազովսկին, որը եղել է ժամանակի կրթված անձանցից, տիրապետել է տասներկու լեզվի, հեղինակել է մեծ թվով աշխատություններ, աչքի է ընկել նաև իր թարգմանական գործերով: Խիկար իմաստունին համարելով հայ ժողովրդական իմաստուն Գ. Այվազովսկին հայտնում է չափազանց հետաքրքրական տեղեկություն այն մասին, որ նա եղել է ոչ թե Ասորեստանի Սենեքերիմ արքայի ատենադպիրը, «ինչպես որ Պղնձե քաղաքին անհամ ու անժուր պատմության հեղինակը հնարեր է»³, այլ Հայոց Սենեքերիմ արքայի օրերին հայտնի հայ առակախոս և իմաստուն: Խիկարին հայ ժողովրդական իմաստուն է համարել նաև Վահան վրդ. Տեր-Մինասյանը՝ 1893-ին վկայակոչելով ճառընտիրից քաղված մի վկայություն⁴, ըստ որի՝ Խիկար իմաստունն ապրել է Թ. դարում: Այստեղ հարկ է նշել, որ ժողովրդական իմաստունները, որպես կանոն, չեն պատկանում որոշակի ժամանակաշրջանի, նրանք քայլում են պատմության հետ ու կրթում են ժողովրդին: Հետագայում գրեթե բոլոր հայ բանասերներն ընդունել են Խիկարին որպես հայ ժողովրդական իմաստունի, սակայն չեն փորձել գտնել այն հեռավոր կապը, որի միջոցով նա դարձել է հայ ժողովրդի իմաստուն ուղեկիցը:

Միջազգային բանասիրության մեջ, ինչպես նշեցինք, Խիկարին սկզբում վերագրվել է հրեական ծագում, ապա՝ ասորական, կարծիքներ, որոնք տիրապետող են եղել նաև հայ բանասիրության մեջ: Մենք փորձել ենք վեր հանել այն մերձավոր առնչությունը, որ առկա է Խիկարյան խրատների և Հայոց Արծրունյաց տոհմի միջև՝ փորձելով նորովի դիտարկել հայ մատենագրության մեջ այդ խրատների ներթափանցման ուղիները:

Ատենախոսության մեջ առաջ քաշված դրույթները, ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել հայագիտության բնագավառում, հատկապես միջնադարյան գրականության պատմության ձեռնարկներում և բուհական դասընթացներում:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՈՒՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության առարկան «Պատմութիւն և խրատք Խիկարայ իմաստնոյ» բնագիրն է, որի հայերեն խմբագրությունն ամենահինն է բոլոր խմբագրությունների մեջ՝ պատկանում է ԺԲ. դարին: Խիկարի խրատների փնտրտուքը հայ մատենագրության մեջ սկսել է Ֆ. Կոնիբերը, ապա շարունակել է Հ. Տաշյանը, սակայն երկուսն էլ բավարարվել են միայն Խիկարյան մի քանի խրատների նմանօրինակները հայ մատենագիրների երկերից դուրս բերելով: Մեր ուսումնասիրության նպատակն է՝ հարցը դիտարկել հետևելով Ե.-ԺԵ. դարերի հայ խրատական գրականության վերելքին ու վայրէջքին, ինչպես նաև հայոց կրթական համակարգում խրատի ժանրի կրթադաստիարակչական նշանակությանն ու խրատական գործեր թողած մեր

³ Գ. Այվազովսկի, Հագար եւ մի առակաւոր բանք ազգայինք եւ օտարք, Կ. Պոլիս, 1874:

⁴ Վ. Տեր-Մինասեան, Անգիր դպրութիւն եւ առակք, Կ.Պոլիս, 1893, էջ 22-2է:

մատենագիրների ստացած կրթությանը:

Կարևոր տեղ ենք հատկացրել նաև բնագրի ժանրային առանձնահատկությունների քննությանը, որը թույլ է տալիս մատնացույց անել գրույցում առկա գրական երեք ժանրերի՝ պատումի, խրատների և առակների առանձին գործածությունը ոչ միայն սեպագիր գրականության, այլ նաև հայ ժողովրդական բանահյուսության և հայ միջնադարյան արձակի մեջ:

Ձրույցի հայերեն թարգմանության սկզբնաղբյուրի վերաբերյալ հակասական տեսակետներն ու հայերեն խմբագրության յուրատիպությունը նույնպես ատենախոսության առանցքային խնդիրներից են:

ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ձրույցի ուսումնասիրությունը բավականին մեծ տեղ է գրավել միջազգային բանասիրության մեջ, անշուշտ, զբաղեցրել է նաև հայ բանասերներին, որոնցից ծավալուն աշխատություններ են գրել Դ. Տաշյանը և Ա. Մարտիրոսյանը: Ատենախոսության մեջ գործածված խիկարյան խրատները քաղել ենք Ա. Մարտիրոսյանի կազմած հայերեն ձեռագրերի քննական բնագրից⁵: Նրա մեծածավալ աշխատությունից հետո հայ բանասիրության մեջ շուրջ քառասուն տարի անդրադարձ չի արվել խիկարի գրույցին, իսկ դա նշանակում է, որ նրա աշխատանքով նյութը համարվել է սպառված և այլևս հետաքրքրություն չի ներկայացրել ուսումնասիրողների համար: Մինչդեռ միջազգային բանասիրության մեջ այս թեման չի կորցրել արդիականությունը, քանի որ, ինչպես նշեցինք, դեռևս պարզաբանման կարիք ունեն բազմաթիվ հակասություններ, որոնց և փորձել ենք անդրադառնալ մեր աշխատանքում՝ համադրելով խնդրո առարկա թեմայի վերաբերյալ մեզ հասանելի գիտական կարծիքներն ու տեսակետները՝ զերծ մնալով անհիմն ենթադրություններից:

Խիկարի խրատների ազդեցությունը սուրբգրային իմաստության գրականության վրա բավականաչափ քննվել է միջազգային բանասիրության մեջ, սակայն ուսումնասիրողներից որևէ մեկը չի մատնանշել շումերական և խիկարյան խրատների ակնառու նմանությունների մասին: Մենք փորձել ենք ցույց տալ շումերական խրատների լայն տարածումն ու գործածությունը հինարևելյան ժողովուրդների կրթական համակարգում:

Առաջին անգամ անդրադարձել ենք եգիպտոսի **Ե** (հուն. Էլեֆանտին) կղզում հայտնաբերված խիկարյան խրատների արամեերեն պատառիկների վերաբերյալ հրեական բանասիրության մեջ կատարված լեզվաբանական վերլուծությանը, որտեղ ակնառու է հայերեն **զ** նախդրի և **զի** շաղկապի գործածությունը:

⁵ Ա. Մարտիրոսյան, Պատմութիւն եւ խրատք խիկարայ իմաստոնոյ, գիրք Ա., Երևան, 1969:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՍՔԸ

Ատենախոսությունը գրված է արդի հայ բանասիրության, գրականագիտության, հայագիտության մեջ ընդունված տեսական-մեթոդական սկզբունքով: Օգտագործված են թեմային առնչվող հայ և օտար բանասերների աշխատությունները և նրանց ելակետային դրույթները: Կիրառվել են համեմատական, համադրական վերլուծության մեթոդները՝ բերված փաստերը հիմնավորելու և ճշգրիտ եզրահանգումներ կատարելու համար:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են գիտական պարբերականներում հրատարակված հոդվածներում, միջազգային գիտաժողովում կարդացած զեկուցումում:

Ատենախոսությունը քննարկվել է ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում և երաշխավորվել է հրապարակային պաշտպանության:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, որոնք բաժանված են ենթագլուխների, եզրակացություններից և օգտագործած գրականության ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ հակիրճ ներկայացված են ատենախոսության առարկան, նպատակն ու խնդիրները, թեմայի արդիականությունը, գիտական նորությունը:

ԳԼՈՒԽ ԱՈՒՋԻՆ

ԶՐՈՒՅՑԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Այս գլուխը բաղկացած է երեք ենթագլխից՝
ա. Ձրույցի արամեական բնագրի շուրջ,
բ. Ձրույցի ակունքները: Հին արևելյան խրատագրություն,
գ. Ձրույցի ժանրային առանձնահատկությունները – պատում, խրատ, առակ, հանելուկ:

Հայ բանասիրության մեջ Խիկարի շուրջ գիտական լուրջ հետաքրքրություն է սկսվել 1898 թվականից՝ Ֆ. Կոնիբերի կազմած հայերեն բնագրի հրատարակումից հետո: Այնուհետև ասպարեզ է եկել Հ. Չրաքյանը՝ հայ բանասիրություն ներմուծելով եվրոպացի հետազոտողների կարծիքները Հին Կտակարանի իմաստության գրքերի հետ զրույցի առնչությունների մասին: Ուշագրավ է հատկապես զրույցի պատմականության հարցի վերաբերյալ նրա հետևյալ միտքը. «Այն ստուգիւ ինքեան շինծու, արևելեան հին վեպերու

գրական հարմարում մը է, որով պատմական ստուգութեան և ոչ կտոր մը ունի մէջը»⁶:

1899-ին «Յանդէս ամսօրեայ» ամսագրում տպագրված իր ընդարձակ հոդվածաշարում Յ. Տաշյանն անվերապահորեն ընդունում է գրույցի հրեական ծագումը. «Աքիկարու նախնականն ապահովապէս երբայեցուց արտաքին մատենագրութեան արգասիք մըն էր, այն բազմաթիւ նախաքրիստոնէական արտադրութիւններէն հրէից, որոնց շատը կորսուած, բայց փոքր մաս մ'ալ թէև յաճախ այլեւայլ փոփոխութեամբ՝ հասած է մեզի: Ասոնց հետ Աքիկար ալ նոյն նկարագիրն ունէր»⁷: Հաջորդ խոշոր ուսումնասիրութիւնը Ա. Մարտիրոսյանինն է՝ «Պատմութիւն և խրատք Խիկարայ իմաստնոյ» Ա. հատորը, որը լույս է տեսնում 1969-ին, իսկ երկու տարի անց՝ Բ. հատորը: Առաջին հատորում նա իր ուսումնասիրած հարյուրից ավելի ձեռագրերը խմբավորում է վեց տարբերակներով, իսկ երկրորդ հատորն ամբողջապէս նվիրում է բանասիրական հարցերին՝ քննելով գրույցի պատմութիւնը, հայրենիքը, բնագրերի հարաբերութիւնը, տարբեր լեզուներով խմբագրութիւնները: Անշուշտ, նա անդրադառնում է նաև հինարևելյան գրականութեան հետ խիկարյան խրատների առնչութիւններին, սակայն, բավականին հպանցիկ:

Հայ բանասիրության մեջ հիմնականում կրկնվել են գրույցի հրեական և ապա՝ ասորական ծագման մասին միջազգային բանասիրության մեջ արտահայտված տեսակետները, բացառությամբ Գ. արք. Այվազովսկու և Վ. վրդ. Սինասյանի, որոնք, ինչպէս նշեցինք, հիմնվելով ձեռագրական տվյալների վրա, ի սկզբանէ Խիկարին անվանել են հայ ժողովրդական առակախոս և իմաստուն:

Այս գլխուն կարևոր տեղ ենք հատկացրել **Խ**. դարակագրին Եգիպտոսում հայտնաբերված արամեերեն վավերագրերի պատմության և լեզվի վերաբերյալ հրեական բանասիրության մեջ կատարված վերլուծությանը, հատկապէս՝ խրատների պատահիկներում **գ** նախդրի և **գի** շաղկապի գործածությանը, որը հիմք է տալիս ասելու, որ այդ խրատները արեւմտեան տիրապետության շրջանում կարող էին փոխառվել հայերեն բառեր պարունակող արձանագրութիւնից:

Չուգահեռ համեմատություն անցկացնելով շումերական, խիկարյան, եգիպտական և սուրբգրային խրատների միջև՝ ցույց ենք տալիս, որ շումերական խրատները գրեթէ նույնությամբ պահպանվել են առավելապէս Խիկարի բնագրում: Այսպէս օրինակ, շումերական հայտնի «Մի՛ ընդդիմացիր քեզ անից հզորին» խրատը, որն առկա է եգիպտական և խիկարյան խրատներում, չի հանդիպում «Առակաց»-ում, այլ միայն Սիրաքի իմաստության մեջ: Այդ խրատն այնքան բարձր է գնահատվել հնում, որ վերագրվելով հույն նշանավոր գրող Յեսիոդոսին (Ք.ծ.ա. Ը-է դդ.) տեղ է գտել «Գիրք Պիտոյից»-ում՝ «Յիմար է, որ ընդ վեհս քան զինքն հակառակէ» ձևով:

Ժամրային առանձնահատկությունների քննությամբ վեր ենք հանել գրույցում առկա գրական երեք ժանրերի՝ պատում-հեքիաթի, խրատի և առակի հնագույն շերտերը, որոնք ժողովրդական բանահյուսութիւնից անցել են սեպագիր գրականութիւն՝ լայն տարածում գտնելով ինչպէս բանավոր, այնպէս էլ գրավոր ճանապարհներով: Բանավոր ավանդության կենտրոնը,

⁶ Անդ, էջ 355:

⁷ Յ. Տաշեան, Մատենագր. մանր ուսումնասիրութիւնք, մասն Բ., Վիեննա, 1901, էջ 99:

ինչպես վկայում են ուսումնասիրությունները, եղել է Սղերոզը, իսկ գրավոր կենտրոնը՝ Եղեսիան, Ամիրզ, որտեղ հայոց կրթական ավանդույթների հիմքում դրվել են հինարևելյան խրատները:

Խիկարի գրույցի ուսումնասիրությամբ զբաղված օտար գիտնականները մեծ նշանակություն են տվել նաև բանահյուսական նյութերին, իսկ հայ բանասերները հիմնականում կարևորել են ձեռագրական նյութը: Այս առումով հնարավորին չափ ընդգրկել ենք նաև բանահյուսական նմուշները, այդ թվում՝ հայ ժողովրդական «խիկարի խրսեսն»⁸ հեքիաթը՝ գրի առնված Մուշուն, որտեղ Խիկարն իմաստուն ճամփորդ է և հասել է մինչև «Ստամպոլ»: Այս հեքիաթի մեկ այլ տարբերակ գրի է առնվել Կարսում՝ «Իմաստուն Խիկարի խրատը» վերնագրով. «Ժամանակով Խիկար իմաստունը թագավորի մտերիմն էր ու խորհրդատուն. թագավորը առանց Խիկարի հեջ գործ չէր էնէ. էտորից սաւայ թագավորի սեղանակիցն էր ու աջ թևը»⁹:

Շեշտադրել ենք նաև այն չափազանց կարևոր հանգամանքը, որ Խիկարի խրատները հայ մատենագրության մեջ մեծ տարածում են ունեցել նաև առանց պատումի և առակների: Բնավ պատահական չէ, որ գրույցը տարբեր ձեռագրերում կրում է «Խօսք իմաստասիրաց և խրատք հասարակաց» կամ «Խրատք պիտանիք և օգտակարք, զոր ասացեալ է Խիկարայ իմաստնոյ» վերնագրերը, որը, ի դեպ, բնորոշ է միայն հայկական խմբագրությանը:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲԱՎԱՐՅՈՒՄԻ ՇՈՒՐՋ

Սույն հարցն ընդգրկել ենք երկու ենթագլխում.

ա. Հայերեն խմբագրության յուրատիպությունը,

բ. Խիկարը որպես հայ ժողովրդական իմաստուն:

Գրեթե բոլոր ուսումնասիրողները մի կողմից մշել են, որ հայերեն խմբագրությունը բավականին ինքնատիպ է, ինքնուրույն և անկախ, մյուս կողմից նմանություններ գտնելով թե՛ ասորական, թե՛ արաբական խմբագրությունների հետ, երկար ժամանակ դժվարացել են պարզել, թե դրանցից ո՞րն է եղել հայերեն թարգմանության սկզբնաղբյուրը: Ի վերջո ընդունելի է համարվել նոր ասորերենից թարգմանված լինելու վարկածը, քանի որ ձեռագրերի համեմատությունը ցույց է տվել այդ խմբագրության անհամեմատ ավելի մոտ լինելը հայերենին: Այստեղ հարկ է մշել, որ գրույցի հունարեն խմբագրությունը չի պահպանվել, սակայն անտիկ շրջանում Խիկարի խրատները լայն տարածում են գտել Դեմոկրիտի վերագրվելու միջոցով, իսկ Խիկարի գրույցի առաջին մասի՝ պատում-հեքիաթի հետ սերտ առնչություն ունեցող Եզովպոսի կենսագրության երկրորդ մասը Մ. Պլանուդեսը գրել է բավականին ուշ՝ Զ.հ. ԺԳ. դարում, այսինքն՝ այն ժամանակ, երբ արդեն հայտնի էր գրույցի հայերեն ամբողջական խմբագրությունը՝ բաղկացած պատումից, խրատներից և առակներից:

⁸ «Հայ ժողովրդական հեքիաթներ», հատ. 11, Երևան, 1980, էջ 299:

⁹ «Կարս: Հայոց բանահյուսական մշակույթը», Երևան, 2013, էջ 315:

Յ. Տաշյանը, քաջ ծանոթ լինելով Ֆ. Կոնիբերի, Ռ. Հարիսի, Ջ. Ամիթի և մյուս գիտնականների կարծիքներին, հայերեն թարգմանության սկզբնաղբյուրի վերաբերյալ գրում է. «Հայերենը թեև անկախ օրինակ մը կը ներկայացնէ, յամենայն դէպս թարգմանութիւն է հաւանօրէն կորսած ասորի օրինակի մը: Ապագային թողուլ կը ստիպուինք նոյնիսկ այն էական խնդիրը, թէ ինչ բնագրէ թարգմանուած էր նախնական հայերէնը»¹⁰: Իսկ Ա. Մարտիրոսյանը վերջնականորեն լուծված է համարում այդ խնդիրը. «Հայ բնագրի ասորական թարգմանությունը հուշում է այն բացահայտ առնչություններն ու նմանությունները, որ գոյություն ունեն ասորական բնագրերի և մեր խմբագրության հնագույն և հաճախ էլ՝ հետագա օրինակների միջև»¹¹: Այստեղ հարկ է նշել, որ միջազգային¹², այդ թվում՝ հրեական բանասիրության մեջ գոյություն ունի տեսակետ¹³, համաձայն որի, նոր ասորերենը թարգմանություն է արաբերենից: Այս դեպքում պետք է ենթադրել, որ հայերենը նույնպես թարգմանություն է արաբերենից, սակայն, ինչպես նշեցինք, այդ բնագրերի համեմատությամբ զբաղված ուսումնասիրողների գերակշիռ մասը նկատել է, որ հայերենն ավելի շատ ընդհանրություններ ունի նոր ասորերենի, քան արաբերենի հետ:

Յ. Տաշյանը գրույցի նախնականը սեմական լեզվով գրված լինելու իր տեսակետը փորձում է հիմնավորել գայլի ուսման առակով, որը ճշգրտորեն պահպանվել է միայն հայերեն խմբագրության մեջ՝ «Որդեակ, զգայլոյ ծագն յառոււմն տուին և ասեն՝ Ասա այբ, բեն, գիմ: Եւ նա ասէր՝ Այծ, բոյծ, գառն»: Նրա կարծիքով, հայերեն թարգմանությունը պարզապէս հաջողված է, իսկ «ասորին միայն երկուքը՝ ա, գ կրցեր է յաջողցընել՝ գառ, այծ, քանի որ միայն դրանց սկզբնատառերը կան ասորերենում, իսկ բ տառով սկսվող չկա: Արաբացին ամենկին չէ յաջողած, վասն զի իւր գառն, ուլ և այծ բառերը բոլորովին ուրիշ տառերով կը սկսին»¹⁴: Մեր խորին հանոգմամբ, սեմական ծագում ունենալու պարագայում կենդանիների անունները պետք է համապատասխանեին ասորական կամ արաբական, այլ ոչ՝ հայոց այբուբենին: Թերևս հենց դա է պատճառը, որ Յ.Տաշյանի համար հայերեն թարգմանության սկզբնաղբյուրի հարցը մնում է անորոշ՝ «Ապագային թողուլ կը ստիպուինք նոյնիսկ այն էական խնդիրը, թէ ինչ բնագրէ թարգմանուած էր նախնական հայերէնը»¹⁵:

Նոր ասորերեն ձեռագրերի առանձնահատկությունները հասկանալու համար մենք քննության ենք առել Ֆ. Նոի հայտնի աշխատությունը¹⁶, որտեղ դրանք ներկայացված են ֆրանսերեն զուգահեռ թարգմանությամբ՝ ծանոթագրություններով և պապիրուսներից քաղվածքներով: Առաջինը Sachau 162 ձեռագիրն է, որը Վվյազովում է **ժե**. դ., գրչության առանձնահատկությունը՝ Խիկարի անվան Հիկար կամ Հայկար՝ Hīkar ou Haykar ձևերն են, ինչպես՝ արաբերենում, այլ ոչ՝ Ախկար, ինչպես՝ նոր ասորերենում: Երկրորդ ձեռագիրը պատկանում է Գրաֆֆենին, կրկնօրինակը նրան է ուղարկել Սե-

¹⁰ Յ. Տաշյան, Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք, մասն Բ., էջ 137:

¹¹ Ա. Մարտիրոսյան, Պատմութիւն եւ խրատք Խիկարայ իմաստնոյ, գիրք Բ, էջ 105:

¹² В. Райт, Краткий очерк истории сирийской литературы, С-Петербург, 1909, с. 18.

¹³ «Հրեական համրագիտարան», (Երբայերեն), Թել-Ավիվ, 1972, էջ 221:

¹⁴ Յ. Տաշյան, Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք, մասն Բ., էջ 136:

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ F. Nau, Documents Relatifs a Ahikar, Paris, 1920, չջ 14:

երտի (Seert, Kurdistan)¹⁷ եպիսկոպոս Ադոայ Շերը (Սղերդի եպիսկոպոս է ընտրվել 1902-ին): Այն առանձնահատուկ է ոչ միայն **ժե.** դարի հայկական գրչության կենտրոններից մեկում՝ Սղերդում գրված լինելու, այլ նաև բացառիկ մի հանգամանքով՝ ասորերեն միակ ձեռագիրն է, որտեղ շեշտվում է հիկարի ազգությունը՝ «Ասուրի և Նինվեի թագավոր Սենեքերիմի և Սարհադոմի օրոք կար Ախիկար անունով մի մարդ, **մի իմաստուն հրեա**, որը գրագիրն ու մոբեդն էր այդ թագավորների: Նա շարունակ անթերի ծառայում էր նրանց, երբ Ասորեստանի Սենեքերիմը մահացավ **679** թվականին նախքան Քրիստոսը»: Մենք փորձել ենք գտնել պատմական այն դրդապատճառները, որոնք կարող էին առիթ դառնալ Սղերդում գրված այս ձեռագրում նման հավելումներ կատարելու, քանի որ հնարամիտ ասորի եկեղեցականը ոչ միայն հրեականացրել է հիկարին, այլ նաև հավելյալ տեղեկություններ է հայտնել Ասորեստանի թագավոր Սենեքերիմի մասին՝ կարծես զգուշանալով գրույցը մեկ այլ Սենեքերիմի հետ կապելուց: Դա տեղիք է տալիս մտածելու, որ նա, ըստ ամենայնի, ծանոթ է եղել Արծրունյաց տոհմի պատմությանը: Ինչպես հայտնի է, Սղերդը եղել է Աղձնիք աշխարհի խեղճ կամ Սերխեթք գավառը, որից էլ առաջացել է նրա անունը: Գտնվում է Արևմտյան և Արևելյան Տիգրիսների միախառնման կետից ոչ հեռու: Այն գոյություն է ունեցել շատ վաղուց. նրա հիմնադրումը ոմանք կապում են Տիգրան Մեծի, ոմանք էլ՝ Սկայորդու անվան հետ: Զ.ժ.ա. **2.** դարում եղել է Հայաստան - Սիջազետք և Արևելք-Արևմուտք քարավանային ճանապարհների հանգուցակետերից մեկը, այնտեղով է անցել պարսից արքայի ճանապարհը:

Ֆ. Նոի աշխատության մեջ արձանագրված արամեերենից նոր ասորերեն թարգմանված երեք նախադասություններից մեկում (պապիրոս 61, տող 2), նկատելի է նաև Ուրարտուի անունը. «Նրանք պատերազմեցին Տիգրայի դեմ, որն ուրարտական ամրոց է»¹⁸: Սակայն Ֆ. Նոն դրա վերաբերյալ որևէ դիտարկում չի անում, այլ կտրուկ անցում է կատարում Կղեմես Ալեքսանդրացու վկայությանը, ըստ որի՝ Դեմոկրիտը Զ.ժ.ա. **5.** դարում իր գրվածքներում գործածել է հիկարի կոթողի գրությունը: Ուրարտական Տիգրա ամրոցի մասին ուշագրավ տեղեկություններ է տալիս Հ. Մանանդյանն՝ իր աշխատության «Արմենները Աքեմենյան Պարկաստանի տիրակալության տակ» գլխում: Հիշեցնելով, որ արմենների՝ Զ. ժ. ա 521-520թթ. ապստամբությունը երեք լեզվով՝ հին պարսկերեն, էլամերեն և բաբելոներեն մանրամասն նկարագրված է Դարեհ Ա-ի բեռնագիր արձանագրության վկայություններում՝ Բեհիսթունի բարձր ժայռի վրա, նա նշում է, որ «արմենների առաջին երեք կռիվները պարսից դեմ տեղի են ունեցել Արմենիայի սահմաններում՝ Ջուզա ավանի և Տիգրա և Ուխյամա կամ Հույավա բերդերի մոտ»: Հասկանալու համար, թե ինչը կարող էր դրդել ասորի եկեղեցականին այդքան կարևորություն տալու հիկարի ինքնությանը, մենք փորձել ենք դիտարկել միջնադարում հայ-ասորական եկեղեցական հարաբերությունները, որոնք, ինչպես պարզվում է, բավականաչափ լարված, երբեմն նույնիսկ թշնամական են եղել: Իր հողվածներից մեկում Ֆ. Նոն, անդրադառնալով գրիչների կատարած միջամտություններին, գրել է. «Ախիկարի գրույցը խմբագրվել է իրարից անկախ երկու հեղինակների կողմից, մեկը՝ էլոհիստ մի հրեա, որը

¹⁷ Սեերտը Սղերդն է:

¹⁸ F. Nau, Documents Relatifs a Ahikar!, Paris, 1920, p. 93:

ստեղծել է պապիրուսները, և մի ուրիշ հեղինակ՝ արդյո՞ք նա հեթանոս արամեացի էր, որ ստեղծել է արևելյան խմբագրությունները»¹⁹:

Հայերեն խմբագրության մեջ ուշադրության է արժանի նաև խիկար անունը, որի ստուգաբանությունն ու գործածության ձևը էականորեն տարբերվում են մյուս լեզուներից: Ասորերեն, հետևաբար նաև արաբերեն ձեռագրերում համդիպում են այս անվան Ախիկար, Հիկար կամ Հայկար ձևերը: Միայն հայերենում է **խիկարը** դարձել **իմաստուն** բառի հոմանիշ, ասորերենում և եբրայերենում ստուգաբանվում է «**իմ քանկազին եղբայր**»՝ **ախիկար**:

Հայերենը տարբերվում է ևս մեկ կարևոր հատկանիշով՝ «Արծվաց դաշտի» փոխարեն գործածվում է «Արծրունեաց դաշտը», որը, ըստ Ա. Մարտիրոսյանի և Յ. Տաշյանի, մեր գրիչները կամ շփոթել են, կամ էլ հավելել են պատումը Հայոց Արծրունիների հետ կապելու համար, քանի որ նրանց տոհմական խորհրդանիշը արծիվն է. «Եւ զԱրծրունիդ գիտեմ՝ ոչ Արծրունիս, այլ արծուի ունիս, որք արծուիս առաջի նորա կրէին»: «Երբ Արծրունյաց տոհմի մանուկ նախահայրը քնած էր բաց օդում, մի արծիվ թևերը լայն բաց արած պաշտպանում է նրան անձրևից և արևից: Դրա համար էլ նրա տոհմը կոչվում է Արծրունյաց տոհմ»²⁰:

Հաջորդ կարևոր առանձնահատկությունն այն է, որ այնտեղ չի հիշատակվում Սարհադոնի անունը, որը պատմականորեն Սենեքերիմի որդին է, մինչդեռ ասորական և արաբական բնագրերում դարձել է Սենեքերիմի հայրը: Սա խոսումն ապացույց է այդ երկու խմբագրությունների՝ մեկը մյուսից թարգմանված լինելու մասին:

Հայերենի վերոնշյալ առանձնահատկությունները, սակայն, առանձնակի կարևորություն չեն ստացել հայ բանասիրության մեջ: «Հայկական խմբագրությունը, հակառակ օտար մյուս բնագրերի, չի հիշատակում Սենեքերիմի հոր անունը՝ Սարհադոն: Այդ շեղումը կարևոր է: Բնագրում կա Արծվաց դաշտ, որտեղ պետք է Նաթանի խարդավանքով ներկայանար խիկարը: Հայ տարբերակներում այն դարձել է Արծրունյաց դաշտ: Սենեքերիմ, Արծրունյաց դաշտ: Ջուզադիպություններն ավելի հեռուն են գնում: Խորենացին հայտնում է, որ Արծրունիները Ասորեստանի Սենեքերիմ թագավորից են, իսկ նրանց տոհմային խորհրդանշանը եղել է Արծիվը: Այս ամենից հետո ոչինչ չէր մնում զրույցը կապելու Արծրունիների տան հետ, իսկ Սարհադոնի անունը դուրս է նետվել իբրև խորթ և անհարիր, ավելորդ մանրամասնություն»²¹, գրում է Ա. Մարտիրոսյանը: Իսկ Յ. Տաշյանը հայերեն խմբագրության մեջ առկա Արծրունյաց դաշտ տեղանունը համարում է շփոթության արդյունք. «Հայերենին մեջ Բողլեան ձեռագիրն է, որ «դաշտն Արծունեաց» կ'ընէ կանոնաւորապէս: Ասկէ միայն քայլ մը կը մնար բոլորովին հայացընելու և «Արծրունեաց դաշտ» ընելու, ինչպէս ըրած են բոլոր միւս օրինակները: Այս ալ վէպին հայացընելու հին ճիգ մը համարելու չենք, այլ պարզապէս շփոթութեան արդիւնք»²²: Փաստորեն, ըստ Յ.Տաշյանի և Ա.Մարտիրոսյանի, զրույցին հայկական ծագումն վերագրելու համար բավական է միայն ապա-

¹⁹ «Revue Biblique Internationale», էջ 76-77:

²⁰ Ա. Ղանալանյան, Ավանդապատում, 1969, էջ 395:

²¹ Պատմութիւն եւ խրատք խիկարայ իմաստնոյ, աշխատ. Ա. Մարտիրոսյանի, գիրք Բ, էջ 212:

²² Յ. Տաշեան, Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք, մասն Բ., էջ 45:

ցուցել, որ Արծրունյաց դաշտը նույն Արծուաց դաշտն է: Կարծում ենք՝ զրույցը «հայացնելու» անհրաժեշտություն բնավ չի եղել, այլ՝ բացելու զրույցի հնագույն շերտերում առկա բոլոր հանգույցներն ու բացահայտելու այդ տոհմի հետ առնչությունները:

Վ. Տեր-Մինասյանը խիկարյան խրատներն ու առածները համարում է ավանդված բանավոր դպրությանը, դրանով իսկ հաստատելով խիկարի՝ հնուց ի վեր հայ ժողովրդական իմաստուն լինելը. «Յիմարություն է պնդել, թե Հայերն ի հնունն զուրկ էին գիտութեան լոյսէ, այո, կար մէկ լոյս, Անգիր Դպրութեան լոյսն էր այն, որ կը ճառայագայթէր ամէն ուրեք: Մարդ ապուշ ըլլալու է կարծելու համար թէ այս ազգ մէկ օրուան մէջ ի բաց կը թօթափէ ամէն նուիրական հին բան, մանաւանդ կրօնք ու հաւատք, և հոգևոր ստորին վիճակէ մը յանկարծ կը բարձրանայ նոր վիճակի մը, այսինքն քրիստոնէության, հինէն աւելի գերբնական և աւելի իմաստասիրական. ուրեմն մտքերն արդէն պատրաստուած էին, մշակուած ու ծաղկած: Եթէ անուն մը կայ անգիր Դպրութեան մէջ, անուն ամէն ուրեք յիշուծ ու յեղեղուած, այս նշանաւոր անունն է խիկար: Որովհետև Առածներ, Առակներ ու Առասպելներ կ'աւանդուին ու կը զրուցուին նորա անունով, ուստի միշտ կոչուած է խիկար իմաստուն. վայելուչ մակդիր»²³:

Այս գլխում արծարծել ենք նաև խիկարի ինքնության վերաբերյալ միջազգային բանասիրության մեջ շրջանառված տեսակետները, ըստ որոնց, խիկարը սկզբում համարվել է հրեա, ապա՝ հեթանոս արամեացի: խիկարին հրեականացնելու համար թեպետ մեծ ջանքեր են գործադրվել, սակայն այդ պնդումը վերջնականորեն չի հաստատվել՝ զրույցում հրեադավանության համոզիչ ապացույցներ չլինելու պատճառով: Զրույցի նախահայրենիքը Միջագետքում՝ Արամ Նահարայիմում տեղադրելով, ուսումնասիրողներն ընդունելի են համարել խիկարի արամեական ծագումը՝ նրան կոչելով հեթանոս արամեացի:

Ինչպես հայտնի է, Նահարայիմ-Նախրինա անունը պահպանվել է եգիպտական աղբյուրներում, քանի որ եգիպտական փարավոններն այդպես են կոչել Հայոց Միտանի պետության Զ.ժ.ա. ԺԶ-ԺԳ. դդ. տարածքը: Եգիպտացիները Թուբնոս Ա-ի արշավանքի ժամանակ Միտանիի համար օգտագործում են Նախրինա՝ «գետերի երկիր» կամ Նախրեն՝ «Միջագետք» անունները: «Երեք դար հետո՝ Զ.ժ. ա. ԺԳ. դարի վերջին ավարտվել է Հայկական լեռնաշխարհում ստեղծված հայոց հնագույն Միտանի պետության պատմությունը, սակայն ժողովուրդը շարունակել է ապրել նրա տարածքի զանազան մասերում ստեղծելով հայկական փոքր թագավորություններ, մինչև Զ.ժ.ա Թ. դարում հայոց նոր՝ Արարատ - Ուրարտու պետության կազմավորումը: Հայոց Արծրունի, Մանդակունի, Ամատունի, Աբրգայետունի և Մուրացան նախարական տների ու տոհմերի անունները միտանյան ծագում ունեն և գալիս են միտանյան ժամանակներից: **Արծրունի նախարարական տոհմը հայոց հնագույն ազնվականական տներից է, որի անունը, ըստ ուսումնասիրությունների, Արգն-Արծն-Արծրունի-Արծրունի անցումների հետևանք է**»²⁴: Սա մեզ հիմք է տալիս մտածելու, որ խիկարի զրույցում առկա ժանրերի՝ պատում-հեքիաթի, խրատների և առակների հնագույն շերտերը

²³ Վ. Տեր-Մինասյան, Անգիր դպրութիւն եւ առակք, էջ Է:

²⁴ Անդ, էջ 80:

մեզ են հասել շումերական գրականության խոր ազդեցությունը կրած մի-տանհի-ուրարտական բանավոր, գուցե նաև գրավոր ավանդության միջոցով:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՆԻԿԱՐԻ ԽՐԱՏՆԵՐԸ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Այս գլուխը բաժանել ենք հինգ ենթագլխի.

ա. Բանք իմաստասիրաց,

բ. Խրատական գրականության ծաղկումը Վասպուրականում,

գ. Խրատական գործերի նվազումը ԺԱ դարում,

դ. Նոր զարթոնք Կիլիկիայի Սև լեռան վանքերում՝ ԺԲ-ԺԴ դդ.,

զ. Հայ միջնադարյան խրատական բանաստեղծությունը ԺԳ-ԺԵ դդ.:

Հայ միջնադարյան կրթական համակարգում հինարևելյան խրատների մեծ դերակատարումը մեզ հնարավորություն է տվել տեսնելու հայ խրատական գրականության սկզբնավորումն ու զարգացումը, վերելքն ու վայրէջքը: Այսպես, Ե. դարի մատենագիրներից Ղազար Փարպեցին կրթություն է ստացել «հոյակապ և ականավոր Արծրունիների տոհմից» սերված Աղան Արծրունու հովանավորությամբ²⁵, Եզնիկ Կողբացին ուղարկվել է Եդեսիա՝ ասորերե-նից հայերեն թարգմանելու սուրբ հայրերի ավանդությունները: Հայ մատենագրության մեջ խիկարյան խրատները փնտրողների (Ֆ. Կոնիքեր, Յ. Տաշ-յան) աչքից վրիպել է, որ Փարպեցուց առաջ Եզնիկ Կողբացին դրանք գործածել է իր «Եղծ աղանդոցի» վերջում գրած «Խրատք»-ում՝ կրոնավորնե-րին հորդորելով ապրել մաքրամաքուր կյանքով, արհամարիել մարմնական վայելքները, որկրամոլությունը, ծուլությունը, զերծ մնալ արատավոր վարք ու բարքից:

Համեմատենք.

Նիկար	Եզնիկ Կողբացի
Որդեա՛կ, մի տրտմեցուցաներ զոք, և ոչ տրտմիս յումեքէ:	Մի՛ տրտմեցուցաներ զոք, եւ մի՛ տրտմիր յումեքէ:
Որդեա՛կ, քիչ ուտելն մարմնոյն շահ է, եւ սակաւ խօսելն հոգոյն շահ է, զի քիչ ուտելովն մարդն ոչ ախտանայ, բայց շատ եւ յավելի ուտելովն հազարք մեռանին:	Մի՛ սիրեր զյագուրդ կերակրոց կամ ըմպելեաց, ապա թէ ոչ՝ զմարմինդ քաղաք պոռնկութեան շինես եւ ամրոց սատանայի:
Որդեա՛կ, ի գինարբունս մի քաջա-նար, զի զբազունս կորոյս գինին կամ Որդեակ, գինի եւ կին կործանէ զայր իմաստուն:	Գինի զբազմութիւն ախտից գարթու-ցանէ, եւ զերկիւղն Աստուծոյ հա-լածէ:

²⁵ Մ. Աբեղյան, Հայ հին գրականության պատմություն, հատ. Ա, Երեւան, 1944, էջ 311:

Ե. դարի երկրորդ կեսից իբրև ճարտասանության դասագիրք օգտագործված «Գիրք պիտոյից»-ը, ինչպես գիտենք, բաղկացած է **Ժ.** գրքից, որոնցից երկրորդը կոչվում է «Յաղագս խրատու», որտեղ գետեղված յոթ խրատները խորապես առնչվում են հինարևելյան խրատական գրականությանը: Այդ գրքի ազդեցությամբ **Ջ-Է** դարերի հայ մատենագրության մեջ տիրապետող է դառնում հինարևելյան խրատները հույն փիլիսոփաներին վերագրելու միտումը: Ասպարեզ է գալիս «Բանք իմաստասիրաց պիտանի ամենայն մարդոյ» ժողովածուն, որը ձեռագրերում հանդիպում է նաև «Բանք իմաստնոց», «Բանք եւ խրատ իմաստնոց», «Ի բանից իմաստասիրաց», «Բանք խրատականք ասացեալ իմաստնոց» վերնագրերով:

Հայ միջնադարյան խրատական գրականությունը, սակայն, միանգամից բուռն ծաղկում է ապրում **Ժ.** դարում՝ մշակութային խոշոր կենտրոն Վասպուրական նահանգում, որտեղ հաստատվել էր Արծրունիների թագավորությունը: Այդ տոհմի պատմությունը գրի են առել նույն տոհմից սերված **Ժ.** դարի պատմագիրներ Թովմա և Անանուն Արծրունիները, որոնք եղել են Ժամանակի կրթված անձանցից, իսկ տոհմի թագավորների մասին մեզ հասած պատմական գրույցները, որ աչքի են ընկնում ժողովրդական բանահյուսությանը բնորոշ համ ու հոտով, պայմանականորեն վերագրվում են Անանուն գրուցագրին: **Ժ.** դարի առաջին խրատական գործը պատկանում է Վասպուրականի Անձևացեաց գավառի եկեղեցական գործիչ, եպիսկոպոս Խոսրով Անձևացու գրչին: Նրա երկու որդիները՝ Յովհաննեսը և Գրիգորը, իրթություն են ստանում Վասպուրականի Ռշտունյաց գավառի Նարեկա վանքի դպրոցում, որի հիմնադիրը՝ Անանիա Նարեկացին ստեղծում է հոգևոր խրատների անկրկնելի մի շարք: Նա վայելում է Արծրունյաց թագավորության արքունիքի, իշխանավորների և բարձրագույն հոգևոր դասի հովանավորությունը, իսկ նրա սանը՝ Գրիգոր Նարեկացին, ըստ Հ. Նալյանի, իր «Համառատիւք բան խրատու»-ն գրում է Արծրունյաց արքա Սենեքերիմի հրովարտակները կազմող Վարդան դիւանադարի պատվերով: Ինչպես տեսնում ենք, Արծրունյաց տոհմի դերը հայ խրատական գրականության զարգացման ու տարածման գործում վիթխարի է: **ԺԱ.** դարասկզբին Արծրունիները ստիպված են եղել պայքար մղել սելջուկ-թուրքերի և բյուզանդացիների դեմ, Բյուզանդիան սպառնացել է ավերել Վասպուրական աշխարհը, եթե Սենեքերիմ Արծրունին իր թագավորությունը չհանձնի կայսրությանը: Այդ վիճակից պարտադրված նա որոշում է թագավորության հողերը հանձնել Բյուզանդիային և փոխարենն ընդունել իրեն առաջարկված Սեբաստիան: 1021 թվականին Սենեքերիմն իր բնակչության մի մասի հետ արտագաղթում է Փոքր Հայքի Սեբաստիա քաղաք՝ կայսրությանը թողնելով իր բարգավաճ թագավորությունը:

ԺԱ. դարում արձանագրում ենք խրատական գրականության թուլացում, որը, մեր դիտարկմամբ, կապված է Վասպուրականում Արծրունյաց թագավորության կործանման և Սենեքերիմ Արծրունու արտագաղթի հետ: Այդ շրջանի մատենագիրներն աչքի չեն ընկնում խրատական գործերով, այլ միայն առանձին մեջբերումներով՝ բացառությամբ Յովհաննես Կոզեռն Տարոնացու: Գրիգոր Մագիստրոսը թեպետ ծավալում է լուսավորական մեծ աշխատանք՝ իր կրթական ծրագրում աշխարհիկ մյուս գիտությունների հետ ներմուծելով «առասպելավարժություն» առարկան, սակայն խրատական գործեր չի գրում:

Եվ ահա խրատական գրականության մի նոր պոռթկում է սկսվում Արևմտյան և Արևելյան Հայաստանից դուրս՝ Կիլիկիայի Սև լեռան վանքերում, որտեղ կրթություն են ստանում Ներսես Շնորհալիին, Մխիթար Գոշն ու մյուսները: Չարմանալի գուգադիպությամբ, խրատական գրականության վերելքը Վասպուրականից հասնում է Կիլիկիա, այսինքն՝ անցնում է Սենեքերիմ Արծրունու անցած ճանապարհով, բայց նրա տոհմի անունն այլևս չի հիշատակվում: **ԺԲ.** դարում Շնորհալու խրատական ստեղծագործություններից շռայլորեն հորդում են ժողովրդական բառն ու բանը: Նրա խրատական-ուսուցական բանաստեղծությունների կողքին ի հայտ է գալիս հանելուկի ժանրը, որը, անկասկած, խորապես սիրված ու տարածված է եղել ժողովրդի մեջ: Բնավ պատահական չէ, որ հայ մատենագրության մեջ **խիկար** բառն առաջին անգամ մուտք է գործել նրա «Առակք»-ում, այսինքն՝ հանելուկներում.

Ջէտ զգաղար խիստ է ի յար,
Սիրէ զմորթի ւ՛ատէ զբանջար.
Ես ինչ կարդան զհւրմէն քեզ ճառ,-
խելօքն ծով է ու խիկար:

Այստեղ հարկ է նշել, որ խիկար բառի ժողովրդական ստուգաբանությունն արվել է ավելի վաղ՝ **ԺԱ.** դարի մի ձեռագրում. «Այրն զոր գեղջուկք Շնար կոչեն եւ էր Շունայր, զի խոտեր զամուսնութիւնն, զբազունս ձգեաց զկնի իւր, իսկ այրն, զոր գեղջուկք **խիկար** անուանեն եւ էր **խոկայր**, զի իւրով իմաստութեամբ հանապազ խոկնամբ ամենեցուն տայր խրատս եւ առակօք կրթէր, պատուեցաւ ի սուրբ հայրապետէ Չաքարիայ»²⁶: Փաստորեն, Շնորհալուց մոտ մեկ դար առաջ՝ 1060 թվականին, «խիկար» բառը ժողովրդի մեջ գործածվել է իմաստուն բառի փոխարեն՝ այդպես են անվանել նրան, ով իր իմաստուն խրատներով և առակներով կրթել է ամենքին:

ԺԲ. դարի հայ մատենագրության մեջ առանձնացրել ենք Մխիթար Գոշի «Խրատք ոգեշահք»-ը, որից մեզ հասած **ԺԲ.** դարի միակ ձեռագիր օրինակը գտնվում է Վենետիկի Մխիթարյան Մատենադարանում: Գրքում ներառված Գոշի երեք ճառերից մեկը՝ «Մխիթարայ վարդապետի խրատ ոգեշահ մանկանց եկեղեցւոյն» պարունակում է նաև խիկարյան խրատներ, որոնք, ինչպես հայտնի է, մեծ տեղ են գրավում սուրբգրային իմաստության գրականության մեջ, հատկապես Սիրաքի գրքում: Մենք ցույց ենք տվել դրանց մանությունները:

²⁶ Ա.Ղանալանյան, Ավանդապատում, Երեւան, 1969:

Ահա մի քանի օրինակ.

Խիկար	Սիրաք	Գոշ
Որդեանկ, եթե տեսանիցես զձերն, յոտն կաց առաջի նորա, զի թէ նա ոչ հատուցանէ, Աստուած հատուցանէ:	Որդեանկ՝ եթե կամիս խորագետ լինել՝ ի մեջ ծերոց կացցես, եւ որ իմաստունն է՝ ի նա մերձեսցիս:	Մերձաւոր լեր դու ծերոց եւ երկիւղածից Աստուծոյ, եւ սպասաւորեա նոցա, զի շահիցիս ի նոցանէ խրատու:
Որդեանկ, մարդ որ խիստ է, քան զքեզ, մի հակառակիր ընդ նմա...	Մի՛ հակառակիր ընդ առն հզաւրի, գուցէ անկցիս ի ձեռս նորա:	Ի բանս հակառակասէր մի լինիր...
Որդեանկ, ի գիշերի առանց զինու ի ճանապարհ մի ելանիցես, զի ոչ գիտես թէ ի թշնամեաց քոց ո՞ ելանիցէ ընդ առաջ քո:		Մի՛ օթիցես յաշխարհ գիշերի, մանաւանդ միայն, բայց եթէ հարկ իցէ՝ ընդ այլ եղբարս, եւ կամ առ քահանայի:
Որդեանկ, եթէ խոստանայցես ինչ ստանալ ընկերի քում, խորհեսցիր յառաջագոյն, զի եղիցին հաստատուն բանք քո, քան գտուլս:	Հաւատարիմ լիցիր դու յաղքատութեան ընկերին՝ զի ի բարիս նորա ուրախ լինիցիս:	Մի՛ խոստանար տալ ընկերի քո զոր ոչ կարես, այլ տուր զոր կարես: Եւ մի խոստանար՝ զի մի պատճառ ատելութեան լիցի:

Ինչպես նկատելի է, նշվածներից «Մի՛ օթիցես յաշխարհ գիշերի...» խրատը, որը խիկարին է փոխանցվել շումերական «Ճամփա մի ընկիր գիշերը, այն կարող է թաքցնել թե՛ բարին, թե՛ չարը» խրատից, սուրբգրային իմաստության գրականության մեջ որևէ ձևով չի հանդիպում, իսկ դա մեզ հիմք է տալիս մտածելու, որ Գոշի օգտագործած աղբյուրը եղել է հինարևելյան խրատների մի ժողովածու, որում ընդգրկված են եղել խիկարի խրատները՝ առանց նրա անվան հիշատակման, քանի որ նա համարվել է հեթանոս իմաստուն: Այսպիսով կարող ենք եզրակացնել, որ Գոշի «խրատը ոգեշահիք»-ում ընդգրկված հինարևելյան խրատներն ընկած են եղել վաղեմի հայ դպրոցի կրթական համակարգի հիմքում՝ եկեղեցու սաներին բարեկիրք վարքագիծ ուսուցանելու համար: Կիլիկիո Սև լեռան վանքում ուսանելու տարիներին Գոշն այնպես է սերտել դրանք, որ հետագայում սեփական մեկնաբանությամբ մատուցել է իր սաներին կրթելու, իսկ նրանց միջոցով նաև հասարակ ժողովրդին լուսավորելու համար:

Ի տարբերություն Գոշի, Այգեկցու խրատները բացահայտորեն ուղղված են նաև աշխարհիկ խավին: Դրանց պատվիրատուն թագավորացի իշխան Բալըվին է, որին Այգեկցին ազնվորեն խոստովանում է, որ այդ խրատներն ինքը ժողովել է տարբեր մատյաններից: **ԺԳ.** Դարի մատենագիր Յովհաննես Պլուզ երգկազու խրատական գործերն ապացուցում են, որ խրատական գրականության վերելքը մարելու նշաններ չի տվել նաև հետագա դարերում:

Երզնկացին հետևելով իր ուսուցչի՝ Այգեկցու օրինակին, խոստովանում է, որ ինքը խրատների հեղինակը չէ, այլ միայն դրանց մեկնիչը: Նույն դարում իր իմաստաբանական բանաստեղծական արվեստով հիացնունք է պատճառում ցափի, տառապանքի և արդարության երգիչ Ֆրիկը, որի խրատները հուշում են, որ նա ստացել է հոգևոր կրթություն և հրաշալի ծանոթ է եղել քրիստոնեական բարոյականության կանոններին: Դրա վառ ասացույցը «Նորին Ֆրիկէ աշխարհականէ ասացեալ տաղ վասն բարեգործութեան մարդկան. Խրատ ոգեշահ պիտանի» բանաստեղծությունն է, որտեղ Ֆրիկը հորդորում է հեռու մնալ չարիք գործելուց, որովհետև չարը չարով է փոխհատուցվում և Աստված չի մոռանում չարագործին:

ԺԳ. դարավերջի և **ԺԴ.** դարասկզբի անգլագական բանաստեղծ Կոստանդին Երզնկացու անկեղծ ապրումներն ու խոհերը հստակ պատկերացում են տալիս ժամանակի իրական կյանքի և մարդկային փոխհարաբերությունների մասին, որտեղ իշխում են երեսպաշտությունը, սուտը, դավը, նախանձը, խաբեությունը, այսինքն՝ այն բոլոր արատները, որոնց դեմ պայքարում էին մեր մատենագիրներն իրենց քարոզներով ու խրատներով: Երզնկացու այս տրամադրություններն համահունչ են խիկարյան խրատների երկրորդ շարքին, որտեղ նույնպես գերիշխող են հիասթափությունն ու խաբվածությունը՝ «Որդեակ, ես ետու զքեզ ի պատիւ եւ ի փառս, եւ դու մատնեցեր զիս ի ձեռս թշնամեաց եւ մահու»: Հատկանշական է, որ **ԺԴ-ԺԵ** դարերում ստեղծագործած Հովհաննես Թլկուրանցին և Մկրտիչ Նաղաշը մեզ նորից տանում են Հայոց Միջագետք՝ Թլկուրան ավան և Ամիդ քաղաք՝ նախնյաց իմաստությունն անաղարտորեն մեզ փոխանցող իրենց խրատական տաղերը վայելելու:

Այսպիսով, խիկարի զրույցի քննությունը հայ մատենագրության մեջ՝ հին արևելյան գրականության համատեքստում, մեզ հնարավորություն է տալիս բացահայտելու Հայոց Միջագետքի և Արծրունյաց տոհմի կրթական ավանդույթների լուսավոր ներգործությունը՝ հնագույն շրջանից մինչև հայ միջնադարյան գրականություն:

ԵՐԱՎԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ա. խիկարի զրույցի հնագույն շերտը կազմում են ոչ թե սուրբգրային, այլ շումերական խրատները և առակները, որ տարածում են գտել շումերական սեպագիր գրականության միջոցով:

բ. Եգիպտական փարավոնները Նահարայիմ են կոչել Հայոց Միտանի պետության տարածքը, որը Սուրբ գրքում կոչվում է Արամ Նահարայիմ: Այդ տարածքը, ըստ պարականոն Հոբելենից գրքի (9:5), հետագայում նվիրվել է Նոյի հետնորդներից Արամին: Պատմական աղբյուրները վկայում են, որ այնտեղ ապրել են միտանի-ուրարտացիները, հետևաբար կարելի է առաջ քաշել այն վարկածը, որ խիկարյան խրատների և առակների նախահայրենիքը համարվող Գոզան - Գուսան կենտրոնը Բ.Ճ.ա. **ժԳ.** դարում եղել է միտանի-ուրարտացիների մշակութային կենտրոնը՝ Միտանիի Վաշշուգանե մայրաքաղաքից արևմուտք ընկած հատվածում:

գ. Գոզան - Գուսան բառը, բնիկ հայկական բառ է և միայն հայերենում է պահպանել իր իմաստը: Այդպես նաև խիկար բառը միայն հայերենում է դարձել իմաստուն բառի հոմանիշ: Higar ձևով հանդիպում է շումերական

գրավոր աղբյուրներում և իմաստով կապվում է մարդու գործունեության հետ:

դ. Ջրույցի արամեական պապիրուսները հայտնաբերվել են Եգիպտոսի **Ե**լ կոչվող հնագույն բնակավայրում, որտեղ աքեմենյան տիրապետության օրոք տեղաբաշխված գորքերի մեջ, հնարավոր է, որ եղել են արմեններ – հայեր, որոնց մասին հիշատակվում է բեհիսթունյան արձանագրության մեջ:

ե. Խիկարի խրատների արամեերեն պատամիկներում **գ** նախդրի և **զի** շաղկապի գործածությունը թույլ է տալիս ենթադրել, որ դրանք կարող էին փոխառվել հայերեն բառեր պարունակող արձանագրությունից:

զ. Դեմոկրիտի հիշատակած Խիկարի կոթողը եղել է սեպագիր արձանագրություն, որի վրա գրված են եղել խրատներ: Բեհիսթունյան արձանագրության պես դրանք թարգմանվել են ու տարածվել:

է. Խիկարյան խրատները պահպանվել և փոխանցվել են հայոց նախարարական տների, հատկապես՝ Արծրունիների միջոցով: Հայ մատենագրություն են թափանցել նաև Հայոց Միջագետքի կրթամշակութային կենտրոն Եդեսիայից, որտեղ հինարևելյան խրատները կրթության պարտադիր բաղադրիչ են կազմել:

ը. Խիկարի գրույցի հայերեն խմբագրությունն ինքնուրույն է և անկախ, քանի որ կազմվել է հայերեն պահպանված խրատների և առակների հենքի վրա և լայն տարածում է գտել **ժ.** դարից հետո: Դրա վառ ապացույցը «Խօսք իմաստասիրաց և խրատք հասարակաց» բնագիրն է, որը համարվում է հայկական հողի վրա ծագած երկ, ընդօրինակվել է առանձին, տարբեր խորագրերով, սակայն մտել է Խիկարի գրույցի խրատականքի մեջ և դիտվել իբրև նրա մի հատվածը:

թ. Խիկարին հայ ժողովրդական իմաստուն են համարել գրեթե բոլոր հայ բանասերները, սակայն միայն **Գ.** արք. Այվազովսկին է և **Վ.** Տեր-Մինասյանն են նշել նրա հայկական ինքնության մասին: Խիկարին Արծրունյաց Սենեքերիմ թագավորի հետ կապելու **Գ.** արք. Այվազովսկու պնդումը օգնում է բացահայտելու այն սերտ կապը, որ գոյություն է ունեցել այդ տոհմի և խիկարյան խրատների և առակների միջև: Պատահական չէ, որ հայ միջնադարյան խրատական գրականությունը բուռն ծաղկում է ապրել Արծրունյաց թագավորության օրոք: Արծրունիներն ունեն միտամի-ուրարտական ծագում, արծիվը նրանց տոհմի խորհրդանիշն է, իսկ Աղձնը՝ վաղ շրջանի կալվածքն էր Աղձնիքում, նշանակում է, Խիկարի՝ որպես իմաստուն խորհրդականի կապն այդ տոհմի հետ գալիս է հնագույն ժամանակներից:

ժ. Աղձնիք աշխարհի հերիհեթ կամ Սերխեթք գավառում՝ Սղեղում պահպանված ասորերեն ձեռագրում կատարված կեղծ հավելումները տեղիք են տալիս մտածելու, որ ասորի եկեղեցականներն իմացել են Արծրունիների, Խիկարի խրատների և առակների հնագույն շերտի մասին, ուստի այդ ձեռագիրը գիտական շրջանառության մեջ դնելուց առաջ Խիկարին հրեականացրել են, իսկ Սենեքերիմին համարել են «Սարհադոնի որդին»:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀՈՂՎԱԾՆԵՐ

1. «Խիկարի գրույցի արամեական բնագրի շուրջ», «Էջմիածին» ամսագիր, 2012, ժԲ, էջ 35 -49:
2. «Առակացն» առաջին հերթին թարգմանելու հասարակական պատճառները», «Էջմիածին» ամսագիր, 2013, ժԲ, էջ 115 -127:
3. «Հին արևելյան խրատները Մխիթար Գոշի «Խրատք ոգեշահք»-ում», Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով, «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները» զեկուցումների դրույթներ, Երևան 2013, էջ 187-188:

ПОГОСЯН РУЗАННА ВЛАДИМИРОВНА

“Пвеств о Хикаре” в армянской классической литературе в контексте древневосточной литературы

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.01.01 – “Армянская классическая литература”.

Защита состоится 29 октября 2014 г. в 14³⁰ на заседании действующего при ВАК в ЕГУ специализированного совета 012.

Адрес: РА, Ереван, улица Х. Абовяна 52а, факультет армянской филологии, аудитория 202.

РЕЗЮМЕ

Диссертация состоит из введения, трех глав, выводов, использованных источников и списка литературы.

Во введении кратко представлена история поставленного вопроса, его актуальность, а также исследования, посвященные различным аспектам.

В первой главе - “Исследование “Повести о Хикаре” в литературоведении”, рассматриваются главным образом работы армянских филологов, причем подчеркивается, что они в основном повторяют тезис о еврейском или сирийском происхождении Хикара, принятый в западном литературоведении. Особого внимания заслуживает мнение армянского архимандрита Габриэла Айвазовского, который 1874 г. впервые заметил, что Хикар был известным армянским мудрецом при Васпураканском царе Сенекериме Арцруни (X в.).

Другой арменовед, Ваган Тер-Минасян, в 1893 году на основании сведений, почерпнутых из одной рукописи, пришел к выводу, что Хикар был довольно известен в IX веке. Интересен тот факт, что почти все армянские исследователи наставлений Хикара считали его армянским народным мудрецом, однако никто не решился проникнуть в суть вопроса, доискаться до причин такого превращения. Следует отметить, что народные мудрецы не принадлежат к определенному времени, поэтому в нашей диссертации мы попытались подробно и поочередно коснуться всех фактических и предполагаемых соотношений наставлений Хикара и рода Арцруни.

С другой стороны, мы приняли во внимание результаты лингвистического анализа еврейских филологов арамейских наставлений на папирусах, обнаруженных на острове Ев (греч. Элефантина) в Египте. В этих отрывках особого внимания заслуживает очевидное употребление предлога “з” и союза “зу”, что заставляет думать о возможном заимствовании наставлений из клинописных надписей, в которых употреблялись образцы армянской лексики.

Следующий вопрос, который очень важен для нашей работы – это огромное влияние наставлений Хикара на библейскую литературу мудрости. Оно довольно хорошо изучено в западном литературоведении, однако ни один исследователь не указывает на древнейший слой наставнической литературы – на шумерскую литературу. Мы попытались показать потрясающее сходство между шумерскими наставлениями и наставлениями Хикара.

Почти все филологи рассматривали повесть как одно цельное произведение, но жанровые особенности повести показывают, что она состоит из трех отдельных частей – сказка, наставление, басня, что подтверждается подобными образцами не только в клинописной литературе, но и в армянской средневековой прозе и фольклоре.

Во второй главе, “К вопросу о первоисточнике армянского перевода”, рассматриваются сирийские рукописи, в том числе, рукопись, сохранившаяся в Сеерте, то есть в Сгерде, который известен как один из средневековых армянских центров письменности. Именно в этой рукописи сделаны ложные дополнения о еврейском происхождении Хикара.

В еврейском литературоведении утверждается, что прародина повести – Арам-Нахараим, местность в Месопотамии, которая во времена египетских фараонов называлась Нахарин, а имя Арам – позднее добавление. Согласно историческим данным, на территории Нахарин находилось армянское государство Митани (16-13 вв. д.н.э.). Исследования подтверждают, что и после падения этого государства там жили митани-урартцы, а это может означать, что они имели тесную связь с культурным центром того времени Гозан (13 в. д.н.э.). Следует отметить, что слово Гозан – Гусан сохранилось только в армянском языке, и согласно Г. Ачаряну, это исконно армянское слово.

Существует гипотеза, согласно которой армянский княжеский и царский род Арцруни имеет митани-урартское происхождение, орел был символом Арцрунидов, а Ахдзн – их колыбелью.

В третьей главе, “Наставления Хикара в древнеармянской литературе”, которая посвящена армянской средневековой дидактической литературе, мы показываем восхождение и падение этого жанра, связывая его с Армянской Месопотамией и родом Арцруни, который сыграл огромную роль в сохранении армянской образовательной традиции. Это подтверждается тем, что наставническая литература бурно развивалась во время царствования Сенекерима Арцруни в Васпуракане, в X веке, а после его переселения в Себастию в 1021 году заново расцвела в монастырях Киликии Севернер – Черные горы.

Важно отметить, что топоним Арцрунское поле сохранился только в армянской редакции повести, а слово “хикар” обозначает мудрец только в армянском языке.

В разделе Выводы обобщены вышеуказанные и ряд других заключений, к которым мы пришли в ходе рассмотрения различных филологических вопросов.

RUZANNA POGHOSYAN VOLODYA

The Story of Ahiqar in the Armenian Bibliography in the Context of the Old Eastern Wisdom Literature

SUMMARY

The dissertation consists of an Introduction, three Chapters, a Conclusion and the List of the used literature. The modernity of the topic, goals and tasks are presented in the Introduction.

The First Chapter: *The Philological Examination of the Story of Ahiqar* (Xikar in Armenian) briefly discusses the controversial viewpoints of Western and Armenian philologists. It is noted that most of the Armenian researchers obviously repeated the opinion of their Western colleagues about Ahiqar's Jewish or Assyrian origin. Only Armenian Archbishop Gabriel Ayvazovsky stated for the first time in 1874 that Xikar was an Armenian folk sage and lived under the rule of Senekerim Artzruni in the 10th century. Later, the monk Vahan Ter-Minasian noticed that according to an Armenian manuscript Xikar was a very famous Armenian folk sage of the 9th century. The point is that the folk sages, as a rule, don't belong to a specific period of time, they come along with the history and educate people.

Indeed, most of the Armenian researchers accepted Xikar as an Armenian folk sage, but no one tried to find out either the main reason of his popularity or to understand why the name of Xikar was so strongly connected with the Armenian ancient noble family of Artzrunis. It is known that their derived their surname from the Urartian word *wartzibini*, which means eagle and was a totemic animal for the Artzrunis.

This Chapter also displays Jewish scholars' research on Aramaic papyruses from the Island Ev (Elephantine in Greek) in Egypt. Scholars focus their attention on several issues. So, the linguistic analysis let us see the use of classical Armenian preposition "z" and the conjunction "zi", which allows assuming that during the Achemenids domination these additions could be borrowed from cuneiform inscriptions with Armenian words.

We also consider that Western scholars have noticed some parallels between the Biblical Proverbs and the instructions of Ahiqar, but they did not pay enough attention to the influence of Sumerian instructions on the Ahiqar. We have tried to show their obvious similarity, also comparing them with Egyptian and Biblical instructions.

The Second Chapter: *The Origin of the Armenian Translation* contains a brief overview of the history of the Armenian versions of Xikar and the discussion of the translation issues. We also examine Syriac manuscripts of Xikar translations from Syriac into French by F. Nau. Once again, it allows us emphasizing the originality of the Armenian version, which was observed and accepted by many scholars. We pay special attention to one of the Syriac manuscripts kept in the province of Sghert (Սղերդ), a very famous Armenian scriptorium of the Middle Ages. It should be stressed that in this very manuscript the Assyrian scribe has made wrong additions about Xikar's

identity. So, we can suppose that he probably knew about the relation between Xikar's instructions, fables and the Armenian dynasty of Artzrunis.

According to Jewish studies the first place of origin of the *Story of Ahiqar* was Aram Naharaim. The point is that Egyptian Pharaohs named Naharin the area of the Armenian State Mitani (16th – 13th centuries B.C.). In the Holy Scripture it became Aram Naharaim. Studies have shown that Mitani – Hurrians lived there even after the fall of the State Mitani. It allows admitting that they were strongly connected with Gozan – a cultural center of that time. It should be pointed out that the word Gozan – Gusan was preserved only in Armenian. According to H. Ajarian, it is an original Armenian word. Thus, only in Armenian the word Xikar means wise man. Some historical sources indicate that the Armenian noble family of Artzrunis has Mitani-Urartian rising and Aghdzen (Աղձն) was their early estate in Aghdznik (Աղձնիք).

Chapter Three is devoted to the great role played by old Eastern instructions in the Armenian educational traditions of the 5th – 15th centuries. On the other hand, it presents the rise and the fall of Armenian instructional literature which, as our study shows it, is strongly tied with Armenian Mesopotamian and Artzruni educational traditions. It must be mentioned that this kind of Armenian literature swiftly developed under the reign of Artzrunis in Van – Vaspurakan in the 10th century. After the fall of this Kingdom and the exile to Cilicia, it went through a new awakening in the Black Mountains (Մալեոնեք) monasteries of Cilicia.

The most findings and results of our study are summarized in the Conclusion.